ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ 20
« 06 » փետրվարի 2014Թ.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվանի գյուղական համայնքի ավագանու 2014թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվանի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N3-Ն որոշումը:
Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԷՔԻԶՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.7/2798-14
06 03 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«_27_» փետրվարի 2014թ. թիվ 3 -Ն

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվանի գյուղական համայնքի 2013թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Սարգսյան Մարինե
2. Սահակյան Պարգև
3. Քեսաբլյան Ալեքսանդր
4. Այվազյան Ռազմիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԷՔԻԶՅԱՆ

2014 թվականի փետրվարի 27

գ. Այգեվան

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ*
*ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*2014ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 -Ի*
*N3-Ն ՈՐՈՇՄԱՆ*

*ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ*
*2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

*ԱՅԳԵՎԱՆԻ* գյուղական համայնքի 2013թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 7820,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 8524,1 հազար դրամ կամ կատարվել է 109,0 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 6206,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 6265,5 հազար դրամ կամ կատարվել է 100.9 %-ով:

2, Շենքերի և շինությունների գույքահարկի պլանով նախատեսված 138,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 0.3 հազար դրամ կամ կատարվել է 0.3 %-ով:

3, Փոխադրամիջոցների գույքահարկի պլանով նախատեսված 1400.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 2181,5 հազար դրամ կամ կատարվել է 155,8 %-ով:

4.Տեղական տուրքերի պլանով նախատեսված 75.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 76,8 հազար դրամ կամ կատարվել է 102.4 %-ով:

2. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 610.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1049,8 հազար դրամ կամ կատարվել է 171.9 %-ով, այդ թվում՝

1.գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 610.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 940,1 հազար դրամ կամ կատարվել է 153,9%-ով:

2. օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով (ուսման վարձ, ծնող վճար և այլն) նախատեսված 0.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 109,7 հազար դրամ կամ կատարվել է 0.0 %-ով:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 17268,4 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 17225,9 հազար դրամ կամ կատարվել է 99,7 %-ով:

*ԱՅԳԵՎԱՆԻ* գյուղական համայնքի 2013թ. վարչական բյուջեով նախատեսված 25699,1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 26799,9հազար դրամ կամ կատարվել է 104.3%-ով:

*ԱՅԳԵՎԱՆԻ* գյուղական համայնքի 2013թ. սեփական եկամուտները նախատեսված 8430.7հազար դրամի դիմաց կազմել է 9574,0հազար դրամ կամ կատարվել է 113,6%-ով:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1. ԱՅԳԵՎԱՆԻ գյուղական համայնքի 2013թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի

համայնքային ծառայությունների գծով նախատեսված 16221,9հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 14818,5հազար դրամ կամ կատարվել է 91.3%-ով:

ա) տեղական ինքնակառավարում ՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 16221,9 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 14818,5հազար դրամ կամ կատարվել է 91,3%-ով:

2.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 1խումբ 1դասով նախատեսված 955.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 934,6հազար դրամ կամ կատարվել է 97.9 %-ով:

3.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ծախսերի գործառնական դասակարգման 06բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 4748,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 4403,4 հազար դրամ կամ կատարվել է 92,7 %-ով:

4.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 963,2 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 960,1 հազար դրամ կամ կատարվել է 99.7 %-ով:

5. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2200.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2000.0 հազար դրամ կամ կատարվել է 90,9%-ով:

2013թ. ընթացքում պահուստային ֆոնդը կազմել է 811.0 հազար դրամ, ո ր ը
հ ա տ կ ա ց վ ե լ
է ֆ ո ն դ ա յ ի ն բ յ ո ւ ջ ե ծախսը կազմել է 331.0 հազար դրամ :

Հողի օտարումից եկամուտ է ստացվել 692.0 հազար դրամ:

2013թ. վ ա ր չ ա կ ա ն բյուջեով նախատեսված 25088.1 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 23116.6 հազար դրամ կամ կատարվել է 90.5-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2013թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 2256.4 հազար դրամի դիմաց. ծախսը

կազմել է 2256.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով, այդ թվում՝

1. տեղական ինքնակառավարում ՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 300.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 300.0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

2. .Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ծախսերի գործառնական դասակարգման 06բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 1956.4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1956.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

## ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ

ԱՅԳԵՎԱՆԻ գյուղական համայնքի բյուջեի տարեվերջի պակասորդը (դիֆիցիտը) նախատեսված 1645.4 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 3764.7հազար դրամ:

Համայնքի ղեկավար Մ. Էքիզյան